ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վարդենիս **26/07/2022**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը, Մուշեղ Շաբոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ահարոն Խաչատրյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զաքարյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքապետարանի սոցիալական ծախսերից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ.

1/Նաջարյան Ադելաիդա Աշոտի /Վարդենիս/-350.000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ

2/ Գալստյան Սարգիս Գոռի /Այրք/-350.000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ

3/ Ղազարյան Արարատ Սիմոնի /Արփունք/-50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

4/Ղարիբյան Ղուկաս Ռոստոմի /Ակունք/-50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

5/Մնացականյան Մուշեղ Վալոդյայի /Մ.Մասրիկ/-50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

6/Գևորգյան Նաիրի Լյուդվիգի /Ծովակ/-50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ

Ելույթով հանդես եկավ Կարեն Մկրտչյանը առաջարկելով 350.000-ական դրամ տրամադրել Սարգիս Գալստյանին և Ադելաիդա Նաջարյանին բուժում իրականացնելու նպատակով, իսկ 50000-ական դրամ անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին:

24 կողմ 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ (ՆԱԽԿԻՆ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վարդենիս համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

1.Վարդենիս համայնքի (նախկին Գեղամասար համայնք) սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Դարանակ բնակավայրի 1-ին փողոց 3 հասցեի (ծածկագիր 05-029-0002-0001, սեփականության իրավունքի վկայական 17092020-05-0032) 0,24643հա բնակավայրերի այլ հողեր հողատեսքի հողը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:
2. Մեկնարկային գինը սահմանել՝ որպես բարձրլեռնային բնակավայր, կադաստրային արժեքի 50 տոկոսի չափով 1քմ-ի համար 108,9 (մեկ հարյուր ութ ամբողջ ինը հարյուր)ՀՀ դրամ (18-րդ գոտի):

Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը ներկայացրեց հարցը: Քննարկման արդյունքում 21 կողմ 3 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ 05-005-0144-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 1,7ՀԱ, ,,ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ,, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՆԱՉ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ,,ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ,, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության կառավարության>> 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը՝համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն ՝ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի բնակավայրի ներսում ընդգրկված համայնքային սեփականություն հանդիսացող 05-005-0144-0001 ծածկագրով 1,7հա <<բնակավայրերի>> հասարակական կանաչ նշանակության հողատեսքը <<բնակավայրերի>> հասարակական կառուցապատման նշանակության փոխադրելու համար՝ մարզադաշտ կառուցելու նպատակով.

Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը ներկայացրեց հարցը: Քննարկման արդյունքում 24 կողմ 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՒԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարություն 2000թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջները՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել՝ Վարդենիս համայնքի 2022թ-ի առաջին կիսամյակի հողային հաշվեկշիռը համաձայն ձևաչափի:

2.Հանձնարարել քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնին՝ հաստատված հողային հաշվեկշիռը Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնելու համար:

Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը ներկայացրեց հարցը: Քննարկման արդյունքում 14 կողմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ա/

Լսեցին
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՎԱԿԻՄ ԼԵՆՔԱՐԻ ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 05-083-0106-0026 ԾԱԾԿԱԳՐՈՎ 2,7ՀԱ, ,,ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ,, ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ,,ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ,, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության կառավարության>> 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հովակիմ Լենքարի
Սիրեկանյանի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Վանևան բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված Հովակիմ Լենքարի Սիրեկանյանի սեփականություն հանդիսացող (Սեփականության իրավունքի վկայականներ N20072022-05-0002) 2,7հա <<գյուղատնտեսական նշանակության>> այլ հողատեսքի նշանակությունը <<Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվաքների
օբյեկտների>> էներգետիկայի նշանակության փոխադրելու՝ արևային կայան կառուցելու համար:

Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը ներկայացրեց հարցը: Քննարկման արդյունքում 24 կողմ 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ 2022ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ</u>/

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-ր հոդվածի 6-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

Քննարկել և հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի զեկուցումը 2022 թվականի 1-ին կիսամյակի բյուջեի կատարողականի մասին՝համաձայն հավելվածի:

Զեկույցով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ առանձին-առանձին նշելով սեփական եկամուտները (մուտքերը և ծախսերը), այնուհետև ելույթ ունեցավ ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը ներկայացնելով կատարված աշխատանքները՝ ըստ հոդվածների, բյուջեի կատարողականը /62,2%/, որը արժանացավ համայնքի ավագանու հավանությանը և առաջարկվեց առավել ուշադրություն դարձնել հողի հարկի հարկատեսակի պլանային կատարմանը:
14 կողմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ղեկավարի զեկուցումը 2021 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի կատարողականը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ղեկավարը զեկույցով հանդես եկավ և ներկայացրեց օրակարգի առաջին հարցը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: Ելույթով հանդես եկավ ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և համաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը և ներկայացնելով ծախսային և մուտքային մասերը:
Հարցը դրվեց քվեարկության՝ արդյունքում 14 կողմ 10 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցը համարվեց ընդունված:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-10

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2022 թվականի հուլիսի 26-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը՝ բաղկացած 7 հարցից.
1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ 2022ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԵՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՎԱԿԻՄ ԼԵՆՔԱՐԻ ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 05-083-0106-0026 ԾԱԾԿԱԳՐՈՎ 2,7ՀԱ, ,,ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ,, ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ,,ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ,, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
4.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ 05-005-0144-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 1,7ՀԱ, ,,ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ,, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՆԱՉ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ,,ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ,, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ (ՆԱԽԿԻՆ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻԴԱՐԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2022 թվականի հուլիսի 26-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու արտահերթ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 24-ը, բացակայում են Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը և Մուշեղ Շաբոյանը: Նիստը իրավազոր է: Նիստին մասնակցում էին աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, աշխատակազմի քաղաքաշինության հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Աբգար Աբգարյանը և աշխատակազմի կրթության, մշակույթի սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ Աննա Վարդանյանը: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը նիստը համարեց բացված: Ահարոն խաչատրյանը ներկայացրեց օրակարգը՝ ծանոթացնելով օրակարգում ընդգրված 7 հարցերին: Օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության, արդյունքում 24 կողմ 0 դեմ ձայների հարաբերակցությամբ հաստատվեց օրակարգը:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Կամո Զարոյանը _____